ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-ՕՊՀԾ-22/01

ք. Երևան «28» նոյեմբեր 2022թ.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ֆիզ. անձ Գարեգին Այվազյան Աշոտի /Ն/ք 014309462/, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ ***Հատուկ ուսուցում*** այսուհետ՝ «Ծառայություններ»:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է մինչև ս/թ դեկտեմբերի 20-ը: Կատարողն իրավունք ունի աշխատանքներն ավարտել ժամկետից շուտ.

1.3.1. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանգրի 1.3. կետում նշված ժամկետում.

2.1.3. Պատվիրատուի պահանջով 3 /երեք/ օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.4. Անձամբ կատարել Ծառայությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունները վճարել սույն պայմանգրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից 5 / հինգ/ բանկային օրվա ընթացքում.

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և վարձատրությունը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմված է580000 /հինգ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ.

3.2. Սույն պայմանագրի վճարները, ինչպես նաև հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները իրականացվում են պատվիրատուի կողմից՝ կատարողի կատարողական ակտերի հիման վրա,

3.3. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանգրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.3. կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 0.5 տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչուր օրվա համար 0.05 տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծում է դատական կարգով :

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրվա՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե	Այվազյան Գարեգին Աշոտի
ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա	ք. Երևան, Միքայելյան 80 շենք բնակարան 17
Ֆին.նախ.գործառնական վարչություն	ն/ք.014309462 տրվ. 29.09.2022թ.
Հ/Հ 900011040947	008-ի կոմից
ՀՎՀՀ 00243582	Կոնվերս Բանկ ՓԲԸ
Գլխավոր քարտուղար	Հ/Հ 1930059935820700
Գ. Մկրտչյան	
----------	----------
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ. S.